ԵԴ/30121/02/22

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17.06.2022թ. ք.Երևան

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ռ.Մ.Բունիաթյանս, ծանոթանալով «Պրոթերմ» ՍՊԸ-ի հայցադիմումին ընդդեմ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի, երրորդ անձ «Ավագ Շին 1» ՍՊԸ-ի՝ գնահատող հանձնաժողովի 20.05.2022թ. թիվ 2 արձանագրությունը, պայմանագիր կնքելու որոշումն անվավեր ճանաչելու, «Պրոթերմ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու պահանջների մասին,

Պ Ա Ր Զ Ե Տ

«Պրոթերմ» ՍՊԸ-ն 09.06.2022թ. հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի, երրորդ անձ «Ավագ Շին 1» ՍՊԸ-ի՝ գնահատող հանձնաժողովի 20.05.2022թ. թիվ 2 արձանագրությունը, պայմանագիր կնքելու որոշումն անվավեր ճանաչելու, «Պրոթերմ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու պահանջների մասին, որը 09.06.2022թ. մակագրվել, իսկ 15.06.2022թ. հանձնվել է ինձ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Ներկայացված հայցադիմումում պահպանվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածների պահանջները:

Ուսումնասիրելով հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ առկա է սույն գործի լուծման էական նշանակություն ունեցող հանգամանքների պարզման անհրաժեշտություն, ուստի գտնում է, որ գործը պետք է քննել դատական նիստում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

Նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատական ծանուցման կարգի վերաբերյալ նախատեսված առանձնահատկությունները և հաշվի առնելով գնումների հետ կապված վեճերը քննելու սեղմ դատավարական ժամկետները՝ Դատարանը գտնում է, որ սույն

գործով դատական ծանուցումներն անհրաժեշտ է իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ դատական ծանուցագրերն ու դատավարական փաստաթղթերն ուղարկելով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստերին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234.9-րդ, 234.8-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

«Պրոթերմ» ՍՊԸ-ի հայցադիմումն ընդդեմ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի, երրորդ անձ «Ավագ Շին 1» ՍՊԸ-ի գնահատող հանձնաժողովի 20.05.2022թ. թիվ 2 արձանագրությունը, պայմանագիր կնքելու որոշումն անվավեր ճանաչելու, «Պրոթերմ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ընդունել վարույթ և հրավիրել նախնական դատական նիստ՝ 2022 թվականի հունիսի 27-ին, ժամը 13:00-ին, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում (Արաբկիր նստավայր, ք.Երևան, Հ.Ներսիսյան 10):

Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԴԱՏԱՎՈՐ Ռ.Մ.ԲՈՒՆԻԱԹՅԱՆ